# Ո Ր Ո Շ Մ Ա Ն  Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.09.2020թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 06-060-0035-0042 ծածկագրով, 0.091 հա մակերեսով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

(Զեկ. Ս. Խեչումյան)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրամանով, հաշվի առնելով, որ հողամասի նկատմամբ գոյություն չունեն իրավունք հաստատող փաստաթղթեր և այն Հայաստանի Հանրապետության կառավարության 04.08.2005թ. N 1457-Ն որոշումով սխալմամբ չի փոխանցվել Ալավերդի համայնքին, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից 18.07.2020թ. տրված N 001 եզրակացությունը և հողամասի հաստատված հատակագիծը՝ համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 06-060-0035-0042 ծածկագրով, 0.091 հա մակերեսով հողամասը, որն առաջացել է 06-060-0035-0031 ծածկագրի հողամասի մասնատման արդյունքում, ճանաչել համայնքային սեփականություն:

<< ԱԿԱ ԳՐԱՆԻՏ>>
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
<< АКА ГРАНИТ >>

<< AKA GRANIT >>
LIMITED LIABILITY COMPANY

No 001

<< 18>> 07 2020թվ

ՀՀ Լոռու մարզ քաղաք Ալավերդի Թումանյան
փողոց թիվ 2
հեռ. +374 91 662 666
+374 91 920 868
+374 55 662 690

E-mail.aka.granit@bk.ru

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի կադաստրային քարտեզի 06-060-0035-0042 ծածկագրի հողամասը առաջացել է 06-060-0035-0031 հողամասի մասնատման արդյունքում, սակայն 06-060-0035-0031 ծածկագրի հողամասը ՀՀ կառավարության 4 օգոստոսի 2005 թվականի թիվ 1457-Ն որոշմամբ Հաղպատ համայնքին փոխանցված չէ, ուստի անհրաժեշտ է ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010 թվականի թիվ 186-Ն հրամանի համաձայն 06-060-0035-0042 ծածկագրի հողամասը համայնքի ավագանու որոշումով համայնքային սեփականություն ճանաչել:

<< ԱԿԱ - ԳՐԱՆԻՏ >> ՍՊԸ-ի

տնօրեն Ա.ՇԱՔԱՐՅԱՆ

Կատարող Սամվել Նիազյան
Որակավորման վկայականի համարը N 002
տրման ամիս,ամսաթիվը ,,05,, Դեկտեմբերի 2011թ.
պետական գրանցման համարը N 03Ա 078219

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱ
06-060-0035-0042 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ




06609822
«ԱԿԱ ԳՐԱՆԻՏ»
«AKA-ГРАНИТ»
«AKA-GRANIT»